

ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ՝ (ՈՒՐԱՅՈՒՄԾ ՊԱՅՔԱՐԸ ԵՒ ԼՔՈՒՄԾ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՒՆԸ)

Շահէ ծ. վրդ. Գասպարեանի սոյն յօդուածը զարմանալիօրէն արդիական է նաեւ այսօր: Արմաշական ոգով քրժուած Հայ Եկեղեցու նուիրեալի մտահոգութիւններն այսօր կարող է կիսել իրեն ԻԱ. դարի քաղաքացի համարող ցանկացած հայ հաւատացեալ ու հոգեւորական: Ճիշտ է, որ նրա արծարծած որոշ բարեփոխիչ տեսակետեր արդէն, բարեբախտաբար, իրականութիւն են դարձել հայ կեանքում (մասնաւորաբար, Աստուածաշնչի թարգմանութիւնը գրաբարից արեւելահայերէն եւ արեւմտահայերէն), այնուամենայնիւ, իր առաջադրած հիմնախնդիրների վերհանումով ու խստորոշմամբ սոյն յօդուածը օգտակար կլինի Հայ Եկեղեցու ներքին ու արտաքին կեանքով հետաքրքրուողների համար:

* * *

ԴՊՐԵՎԱՆՔԻ քաանեռիկզամնակը քօնկու առթիւ, անօգուր չէ պահ մը անդրադառնալ Հայ Եկեղեցոյ եւ Հայ ժողովրդին փոխադարձ յարաբերութեանը վրայ:

Առաջին րեսութեամբ մեզի կը ներկայանայ Արեւելեան Եկեղեցի մը՝ որ պարկառելի Նուրթիւն, պարուական Կազմակերպութիւն ու պարմական գնահարելի Անցեալ մը ունեցած է:

Եը հաւարանք թէ այս Եկեղեցին այսօր ալ քակալին կոչուած է հայ կեանքին մէջ կարարելու յոյժ կարեւոր դեր մը: Աւա՛ղ որ, սակայն, կը դժուարանայ կարարել գայն՝ գանգան պարծառներով:

Միւս կողմէ, ունինք Հայ ժողովուրդը որուն անցեալը անթերի նուիրում մը եղած է իր Եկեղեցիին՝ աննման ու մշրական մարքիրոսութեամբ ու արեան չափ պաշրպանութեամբ, որ ներկայիս ալ ինքզինք կը դաւանի նոյնին ժողովուրդը, բայց որուն ծոցին մէջ այսօր՝ կրօնական հաւարալիքներն ու կարգապահութիւնը վարուած թուացած են, եւ ո՛չ այսչափ միայն, այլ նաեւ նախնի հաւարքը, օրէնքները յամառ յարձակմանց ենթարկուած են հայ մարտրական դասակարգերու, ինչպէս նաեւ մութ, ո՛չ գիտուն խաւերուն մէջ ալ:

Երեւոյթ մըն է այս, գոր կ'արժէ ուսումնասիրել ուշիւ, լիովին ըմբռնելու եւ դարմանելու համար սրելծուած ճգնաժամային կացութիւնը:

Նախ, յարձակումները Հայոց Եկեղեցիին դէմ կը մեկնին քարքեր քեսակէքներով, անհաւասար արժէք ի յայր կերերն, բայց կարեւորն այս է որ արտնք ԸՆԴՆԱՆՈՒՐ են: Յարձակումներէն ոմանք կուգան յանուն բանականութեան (գիտութեան, փիլիսոփայութեան), ուրիշներ՝ յանուն Ագարութեան (յեղափոխութեան, ընկերվարութեան), եւ քարօ-

1 «Արմաշու դպրեւանքին 25 ամեայ յոբելանսին առթիւ (1889-1914)», 1914, Կ. Պոլիս, էջ 251-263:

րինակ չէ՝ մաս մըն ալ յանուն Ուղղափառության (բարեկարգության եւ այլն): Կուգան՝ մերթ քացէ ի քաց, Նայ Եկեղեցին՝ իբր հաստատություն՝ հայ կեանքին մէջէն ջնջելու նպատակաւ. մերթ անուղղակի, կեղծառք վերապահություններով, եւ վերջապէս նաեւ գործովագին սիրոյ գեղումներով, վերքը բանալու ու կարելու մտադրութեամբ:

Յարձակմանց այս պէսպիսությունը ապացոյց մըն է ինքնին, թէ մշտնապար անորոշության մը կը տիրէ միաբերու մէջ կրօնական հարցերու նկատմամբ. վարանքի ամպ մը կապարէ Նայուն պայծառարեւութիւնը. չքննելու եւ չզգալու (հետեւաբար չսպրելու) այն տեսակները, որ գտականակա՞ծ ու վարած էր Նայութիւնը:

Եւ մինչ իրողութիւն է որ 1. Յարձակողական բանակները համաձայնա՞ծ են հարուածելու գործին մէջ. 2. Նայ Եկեղեցին է որ կը կրէ բոլոր հարուածները. իր իրաւունքները, հեղինակությունը՝ ժողովրդային ու գիտական դատերու մէջ կասկածի ու վրանգի ենթարկել կ'ուզուի, երեսոյթը ողբերգական երես մը կը ներկայացնէ. 1. Նայ Եկեղեցին ինքզինք պաշտպանելու վճռական ո՛չ մէկ ճիգ կամ շարժում չի ցուցներ. 2. Անոր պաշտօնէությունը երկու բանակի բաժնուած է անուանապէս, «Տիներ»ը եւ «Նորեր»ը, «Լսաւարեալներ»ը եւ «Լուսաւորեալներ»ը, կամ «Պահպանողականներ»ը եւ «Ազատականներ»ը:

Ըստ իս չկայ բաւարար արդիւնք մը արդարացնող այս զարդարումները, քանի որ կը պակսի խրաքանչխրին՝ ՄԿԶԲՈՒՆԲԸ. որոշապէս չենք գիտեր ինչ են ամէն մէկ խմբակցությունը վարող կեղծոնական-ապրեցնող գաղափարը. ծրագիրը եւ ըստ այնմ ընկերուած միջոցները. Պահպանողականը ի՞նչ կ'ընէ. ի՞նչպէս կը գործէ Եկեղեցին մէջ՝ ժողովուրդին համար. եւ ի՞նչ է Ազատականին ըրածը, ո՞րն են իր յառաջադիւծությունները, ո՞րն է եղած իր նպատակակէտը, իր դաւանանքը ու մեթոքները որո՞ն եւ ե՞րբ պարգա՞ծ է:

Յորճափ այս կէտերը չի փաստուին, պիտի ըսենք թէ Նայ կղերը մարմին մըն է, որ Նայ Եկեղեցին համար, այս յարձակմանց հանդէպ կը հետեւի մեթոքի մը, որ է *ամենեւին չի խորհիլ ու չի գործել*:

Ուրիշ խօսքով այս քարօրինակ դիւանագիտությունը կարելի է կոչել ՈՒՐԱՅՈՒՄՈՒ ՊԱՅՔԱՐԸ:

Սակայն հակառակ եկեղեցականութեան ուրացումին՝ պայքարը կը սաստկանայ, համաճարակի մը նման կը ծառայի ու շփոթությունը կ'աւելանայ. ընդանիք, սեղան, կեանքի սրբություն, օրէնք, կարգ կանոն եւ նոյն իսկ Աստուած օրէ օր կը կորսնցնեն իրենց ըմբռնումը մեր ժողովուրդին մէջ, եւ յարձակողական բանակներու fanatisme-ը կը հնչեցնէ փոխառեալ հինցած համերգը իբր նորություն ու կ'երգէ հայ ակաջներուն:

«Անձնաւոր եւ կենդանի Աստուծոյ մը մասին եղած հաւատքը աղբիւրն ու սկզբնապարճա՞ն է հիմնապէս՝ մեր ընկերական ողորմելի վիճակին: Աստուծոյ գաղափարը որդնոյթա՞ծ քաղաքակրթութեան մը պորտաքարն է. խորտակենք զայն: Ազատութեան, հաւասարութեան եւ երջանկութեան ճշմարիտ ճամբան անաստուածությունն է:

Չիք փրկություն երկրի վրայ, ցորճափ մարդս երկինքէն կախուի թելով մը... թող այսուհետեւ ո՛չ մէկ բան արգիլէ մարդկային մարքի անկախությունը. սովորեցնենք մարդուն թէ ինքն է միայն իր Աստուածը, թէ ինքն է աշխարհն ու օմեղան ամէն բանի. ինքն է գերագոյն էակը եւ ամենէն իրական իրականությունը» (Guillaume Marr):

Եւ մինչ այս գաղափարները իրենց ճամբան կը քալեն Նայոց ժողովուրդին մէջէն, հայ եկեղեցականութիւնը - յարգելի բայց ցանցատ բացառութիւնով - կը շարունակէ զբաղի մկրտելով, պսակելով, թաղելով, ամուսնալուծելով ու իբր թէ Նայ Ազգին քաղաքական ճակարագիրը փոխելու ջանալով: Յաճախ կը գանգաւրի հայ կղերը, թէ Նայերը նախնեաց հաւաքքը, բարի բարի աւանդութիւնները թողով, ոչխարներուն պէս կը հեւրելին մոլորեցուցիչներու:

Տեղն է հարցնել. - Ո՞ր է յանցաւորը, ժողովուրդը, Ազգը Եկեղեցիին համար եղած են, թէ Եկեղեցին՝ Ազգին համար: Իրերը փարբեր ընթացք մը պիտի առնէին այն օրը, երբ ամենքս անկեղծօրէն համոզուէինք թէ կրօնքը լոկ ծէս-խորհրդակալարարութիւն չէ. թէ մեր նախնի եկեղեցականք, զբաղելով հանդերձ աշխարհիկ ու քաղաքական գործերով, դարձեալ աւելի՛ հոգեւոր, աւելի՛ ճշմարտապէս քրիստոնեայ մարդեր էին եւ Ազգին փոխին ծնւն աւելի թանկագին ժառանգութիւն մը, մաքուր բարոյական հաւաքք մը. Եկեղեցին փարբին ժողովուրդին, ներմուծեցին զայն՝ կեանքի մէջ. Աւերաբանը հայացուցին, մարդկայնացուցին եւ ապրեցուցին հայ ժողովրդեան առօրեայ կեանքին մէջ. ու մենք դեռ այդ ժառանգութեամբ է որ կ'ապրինք ու կը պարծինք իբր կրօնական ազգ:

Նարուսի օր սնանկ որդիք, մենք արդի Նայերս:

Արդ կուգանք կենսական հարցման մը. ի՞նչ պիտի պատահի երբ այդ ժառանգութիւնը սպառենք. ի՞նչ պիտի ըլլայ այս ուրացուած պայքարի մէջ Լ.ԲՈՒԱԾ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ հետեանքը:

Ասիկա կը նշանակէ ուրեմն թէ Նայոց Եկեղեցին անդարմանելի փկարութեան մաքնուած է. արդեօ՞ք անոր պաշտօնութեան համար նստիլ, սպասել փեսնելու, թէ ճակարագրականութիւնը ի՞նչ պիտի փոխին. արդեօ՞ք հայ հոգեւորականութիւնը այս ճգնաժամային կացութիւնը կը նմանցնէ անոր, որուն օրէնսգէտ Գամաղիէի իմաստութիւնը կը յորդորէր իր ազգակիցները - «Թ-ոյլ փութ դոցա, զի թէ ի մարդկանէ իցէ խորհուրդդ կամ գործդ՝ քակրեսցի.» (Գործք Ե. 38):

Ես չեմ կրնար այսպէս մտածել, չեմ կրնար նուագեցնել չարիքը որ կը փեսնեմ Նայոց Ազգին բարոյական ու կրօնական հաւաքալեաց թուլացումին մէջ: Ես կը փափագիմ ընդհակառակն այդ չարիքին վրայ արթնցնել ու կեդրոնացնել բոլոր դասակարգերուն եւ մասնատրապէս հայ հոգեւորականութեան ողջախոհութիւնն ու հոգածութիւնը:

Պարմութեան մէջ, ամեն շրջան ունի իր գաղափարները, զգացումները, կանխակալ կարծիքները, փարսկոյսները, իր մեծութեանց թովիկը՝ իր փկարութիւնները. վերջապէս իւրաքանչիւր դար ունի իր պարմական բարոյական որոշ դիմագծութիւնը, գոր կը գրնենք ազգերու մէջ:

Մեր Ազգը՝ բոլոր միւս ազգերու պէս ապրելով այս նոյն երկրագունդին վրայ, բնական է որ դարուն կամ շրջանին վերոյիշեալ դիմագծութիւնը պիտի գրնէինք իր մէջ աւելի կամ նուազ շեշտեալ ձևով, թիչ մը ուշ կամ կանուխ, այդ չէ կարեւորը:

Նայ հոգեւորականութիւնը պէտք չէ մոռնայ թէ Նայ Ազգը ժամանակակիցներէն ու միջավայրի ազդեցութիւններէն մեկուսացած չապրիր, քաղաքական ընկերային ինչ պայմանի փակ ալ ըլլայ: Օգտակար է միշտ յիշել ու կրկնել թէ Եկեղեցին բիրտեղացած

քարացած աւանդութիւններուն, անհասկանալի եւ անիմաստ հաւատոյ կանոնի (Rule of faith) մը կեղեւ չէ՛, այլ, ինչպէս կը հաւատարմք, Եկեղեցին կենդանի գործարանատրոթիւն (organism) է, որ կը գործէ, կը սնանի ու իր կարգին կը սնուցանէ Ազգը, ժամանակի գաղափարներուն *սխալը չափեցնելով* Աւերարանին յաւիտենական ճշմարտութիւնները: Եկեղեցին գոյութեան պայմանը մարդկային կեանքին յառաջադիմութեան մէջն իսկ է. անկէ դուրս Եկեղեցին կը փճանայ, կը դադրի ըլլալէ ա՛ղը՝ որ համ կուտայ, ու հետեւաբար կը նկրտի ուրբերու փակ ու կը կոխկոտրուի:

Պապութեան չէ՛ արդի փրկող մտաւախութիւնը ոմանց. Ազգը նորոգուած Եկեղեցի մը կը պահանջէ ունենալ, սրբեղծէ՛ր զայն, հնարաւոր դարձնէ՛ր անոր գոյութիւնը. ա՛յս կը պահանջէ հայութեան լաւ իմացուած շահը: Միշտ աչքի առջեւ ունենանք սա ճշմարտութիւնը 20-րդ դարուն Նայերը իրենց ժամանակի մարդերն են, դարուն իմացական ու բարոյական մթնոլորտը կը շնչեն. անոր շարժմանց կը հետեւին՝ կամայ ակամայ: Այսօր ամենուրեք մարդիկ իրենց ժամանակին մարդերն են՝ աւելի քան երբ եւ իցէ, եւ այս՝ շնորհիւ այն արագութեան որով գաղափարները շրջան կ'ընեն: Փոխադրութեանց ու երթելկութեանց յարաճուն դիրքիւնները, ընթերցասիրութեան փրփուած զարկը կարեւոր ազդակներն են գաղափարներու շրջագայութեան: Նայերը, ստույգ է, որ այսօր ընդհանուր առմամբ շատ աւելի կը կարդան (թեպէտ ոչ պահանջուածին չափ դեռ) քան 18-19րդ դարուն՝ իրենց նախնիքը:

Քաղաքակիրթ ազգերու հետ շփումը նոր քարոզիչներ բերաւ մեզի, գաղթող թոշուններու պէս անոնք հեռու երկիրներէն մեր հողերուն անձանօթ սերմեր բերին, ցանեցին մեր դաշտերուն մէջ: Նայաստանի ժողովուրդը այսօր աւելի կը լսէ գիտութեան խօսքը ընկերային խնդիրներու վրայ քան որչափ չէին լսած նախորդ սերունդները: Ընթերցումը, ճառերը, ՆՈՐ ԽՕՍ-Քերը իրեն համար կրնան բարի կամ յոռի գործութիւն մը եղած ըլլալ. բայց ամէն պարագայի փակ չենք կրնար ուրանալ թէ անոնք իր կեանքին մէջ չեն դադրիր ՈՅԺ մը ըլլալէ: Ուրեմն, հայ հոգեւորականը *սխալորի նկատրողութեան առնել այդ նորակազմ Ոյժը, նոր factorը եւ զայն գործածել յօգուտ եւ ի շահ Եկեղեցոյ:*

Ահա այս կէտին մէջ կը կարծեմ թէ կը թերանանք հայ հոգեւորականներս, շաղկերտ հանրային ու խղճի դարաստանին առջեւ անհատ պարասխանապտութիւն մը, ուրացուած պայքարին մէջ լքելով մեր պարսպը:

Պէտք էինք լաւ ուսումնասիրած ըլլալ մեր ժողովուրդին հոգեբանական վիճակը: Այսօր անուրանալի իրողութիւն է թէ Նայր բոլորն ու ներքակ քաղաքութեանց եւ իրադարձութեանց մշտապարտաստ զանգուած մըն է: Պարճառները այլազան են բայց ըսածս fact մըն է:

Չափեցէք, կշռեցէք հայ ժողովուրդը, ուսումնասիրեցէք զայն իր բոլոր փոքրերուն ու դասերուն մէջ. բարձրը, ցածը, ամէն կուսակցութիւններով հետ մէկտեղ (հարուստն ու աղքատը, ուսնալն ու անուսը, ռամիկն ու ազնուականը, ուսուցիչն ու եկեղեցականը). ի՛նչ պիտի փնտնէք, դեղեկոտ, անհաստատ ազգ մը, որ առ խաբխափ՝ իր շաղկը կ'որոնէ, որ յոյժ գանազանակ գաղափարներու եւ դարերո՛ւ միաժամանակ ծառայելու համար պարտաստ անթիւ խումբեր կը ծնի իր ծոցէն, գոր կրնաս թշու բացարձակապէս ներքակ

ուղղություններէ: Օր մը թունդ կարմիր յեղափոխական է, միւս օրը հլու հպարակ. երբեմն շա՛ր ազապամիր, երբեմն չափազանց աններող ֆանաթիք: Մերք կը պաղի ու կ'երկ-
ջորի՝ իր փառասիրտիւններուն մէջ կրած անկումներով, իր յուսավրիպումները զինք
քաղաքական վիճակին վրանգներով, առանց սակայն բոլորովին մոռնալու իր մրաժու-
թեան իրաւունքները:

Քաւ լիցի սակայն որ ես իմ ազգս աննկարագրութեամբ դաքապարտեմ. անիկա ու-
նեցած է իր որոշ գոյնը, բարոյացուցիչ ընդհանուր հանգամանքները, *ճանչցուած է վա-
ղոց հեպէ իբրեւ աշխատասէր, յառաջադիմասէր, արթուն եւ աշխոյժ արեւե-
լեան ժողովուրդ մը*, որոնցմով վեր կը մնայ, կը փարբերի իր դրացիներէն: Ընդհանուր
առմամբ ատիկ մօտ եղած է առաքինութեան, բան գերի մոլորութեանց: ՆՄԱՆՈՒԹ-ԵԱՆ
ընկերաբանական սկզբունքը՝ կեանքի ու կենդանութեան աղբիւր մը եղած է իր մէջ՝ կար-
ծես բնագոյաբար: Ներկաբար ժամանակ առ ժամանակ իր անկումներէն պարտաւոր
վերադարձ մը կ'ընէ իր ազնուական ազգ, բաղձանքներուն ու զիպակից հաւաքքին լու-
թեանը: Բռնապետական Ասիոյ մութ դարերուն ու դաժան փարիներուն մէջ՝ Բրիտան-
ութիւնն ու քաղաքակրթութեան ջահը միջոյ աւուր բռնող ժողովուրդը եղած է ան. ան
է իր պարմական դերը, որ զինք արժանի կ'ընէ ազգաց պարմութեան մէջ յարգանքի:

Ահա այս դաշտին վրայ պիտի գործենք մենք, հայ հոգեւորականներս. մեծ ու բե-
ղուն դաշտ մը՝ բաց յայտերուն ու ջանքերուն՝ այն բարձր, ամուր ու պարտաւոր մարքերուն,
որոնք լքօրէն կը գրադին հայ ժողովուրդին ու անոր պարտական Եկեղեցիին ճակա-
ւագիրովը:

Առաջին պարբերելիս է ուրեմն ճանչնալ մեր դարը, ճանչնալ *«ժամանակին
նշաններ»*ը, *մեր ժողովուրդը*, ուշադիր հետեւիլ այն ամէն բաներու, որոնք կրնան
անոնց ոգին յայրնել մեզ եւ անոնց ժամանակակից ձկարմներուն փեղեակ ընել մեզ:

Ծաղրող ու թերեւ անհաւատութեան մը յաջորդած է հիմա լուրջ, ծանր ու հրապուրիչ
մեղամաղձութեամբ դիտող անաստածութիւն մը: Բռնաւորութեան, ազապութեան
եւ հոգիի ամէն նուիրական ու ազնիւ բաներուն անուումով մեր նոր սերունդները կը հրաւի-
րուին մնաք բարով ըսելու իրենց մանկութեան հաւաքքին: Ասիկա համոզուած եմ որ մեր
ազգային գայթակղութիւններէն մէկն է, շար փխմ'ր:

Բայց փխուր բաներու թով ո՛րքան պարճառներ ունի հայ հոգեւորականութիւնը յու-
սալու եւ քաջալերուելու: Նարկ կա՛յ ապացուցանելու թէ crisis-ի շրջանները թէ՛ւ փաժա-
նալի, բայց նաեւ անոնք չէն է՛ն նուագ բեղունները. այդ միջոցին Ազգերը արցունքներով
կը ցանեն, յերոյ յաղթութեան երգերով հնձելու վստահութեամբ:

Բայց պէտք է ցանել, պէտք չէ՛ յուլանալ:

Դիպեցէք, երկիրը ո՛րքան հիանալի կերպով պարբաստուած է. այն միակ եղելութիւ-
նը թէ կրօնական հարցերը օրակարգի մէջ են, անհուն առաւելութիւն մը կը ներկայացնէ,
որմէ կրնանք օգտուիլ: Երբ մէկ կողմէ բացուած պայքարը, կարարուած յարձակումները
վնասած են բարեպաշտութեան զարգացումին, նոյն արեւն իբրեւ բնական հակազդեցու-
թիւն անիկա թօթափած է շար հոգիներէն իրենց թմրութիւնը: Կասկած չկայ որ ատիկ
դիւրին է փարակոյսներով փրայրող հոգիներու ուղղուիլ, բան ուղղուիլ այն հոգիներով՝
որոնք անփարբերութեան մահախանգոյն բունին մէջ կը խորթան՝ ծա՛նր ու ծոյլ:

Անշուշտ մեր նախնիքներեն առելի երջանիկ ենք 20րդ դարում մեջ ապրած ըլլալուս համար: Մեր դարը ունի իրեն փառքը: Նարկ չկայ գայն նուաստացնելու փորձել օրինակելով այն դիրքին ու գոնիկ յոթերեսությունը, որ ամեն բան սեւ կը քանսնէ, որ կը յուսահարի՝ ժամանակի միայն թերութեանց ու մոլութեանց մասին խօսելով, առանց քննելու նաև անոր առաքինություններն ու ներշնչող ազնուական սրբապնդիչ երևոյթները:

Ժամանակակից մարդկության է պրտած ականապես ըլլալ ամենամեծ ու ճշմարիտ յառաջադիմութեանց: 1. Ժողովուրդներ կ'աճին, հսկայական հարստություններ կը կուտակուին ու կը ծախսուին քառապող մարդկությունը յուսաւորելու եւ յաւացնելու, մտայլ երկրամասերը մեր գոյսքին յուսով կ'ողողուին, պարերագմներ ազգերու սահմանները կը փոխեն, հին ցեղեր նոր փառքերով կը յառնեն, ազգեր ու լեզուներ կը գիրկընդխառնուին:

2. Գիտութեանց կիրարկումները, հեռաձայն, անթել հեռագիր, մօթէօրներ շարժման արագությունը կ'աւելցնեն, ճարտարարտուեսքի ալիքը կը յորդի միասնագութեան մարմնելով գմեզ անխներու մեջ չարապանջուող բիրատր մարդերու, կիներու եւ մանուկներու բարոյական, ֆիզիքական եւ ընկերային պայմաններուն վրայ:

3. Նիւանդանոցներ, ծերանոցներ, անկէլանոցներ, դարմանարաններ, անհուն թոռով դպրոցներ, համալսարաններ, թարրոններ, հասարակաց պարբերակներ, եկեղեցիներ եւ միթինկի ահատր սրահներ յայնապարած բանարերու մթությունը չարոնց մոռցնել պրտած են:

4. Ք. ճառագայթներուն եւ Ռ-ապիւմի անրես գօրություններուն նման գիտեր հիւանդություններուն եւ մոլութենէ սնանող ախրերուն հետ միաժամանակ բժշկական եւ վիրաբուժական աշխարհին մեջ հրաշքներ կը գործեն:

Այս ամէն հսկայաբայլ յառաջադիմութեանց մեջէն եթէ կը փչէ մերթ գեշ հով մը, չմոռնար նաև թէ աղէկ հով մըն ալ կը շնչէ, երջանկութեան, միթարութեան գովությունը բերելով ճշմարտութեան ըղձանքով քոջորոտող հոգիներուն:

5. Արդի փիլիսոփայությունը փոխած է իր օգրախնդիր ու նիթապաշտ առանցքը եւ կը ձգրի դէպ ի բարոյագիտական, հոգետր մթնոլորտներ. կը ջանայ վերահասարակել այն խորունկ ներդաշնակությունը, որ կայ բանականութեան եւ հաւարքին միջեւ:

6. Մինչ մէկ կողմէն դաժան եւ յեղափոխական քնսակէտներ կը ծաւալին, միւս կողմէ օրինաւորութեան եւ կանոնատր ազարութեան սկզբունքները գիրար կ'ամբողջացնեն ու կը պաշտպանեն:

7. Խաղաղութեան ոգոյն maximներն ու զգացումները՝ արկածախնդրութեան եւ աշխարհակալութեան յիշարակներուն ու աւանդութեանց չափ բարձր եւ ուժեղ կը խօսին արդի մարդկութեան:

8. Առողջ քաղաքական քնսերությունը աշխարհի նախանձախնդիր պարերագմիկներ ունի, որքան ունին ընկերվարական, communist յաւակնություններն ու երագանքները:

9. Նոգէպաշտությունը բարձր ի գլուխ կը կանգնի նիթապաշտութեան քով. Քրիստոսնէությունը անհաւարութենէն առելի գիտական ու գործնական յառաջադիմութեան մեջ է, իր մեթոքներով ու արքադրած միլիոնատր հարորներով: Աստուածապաշտությունը

պարմական ու բարոյագիտական թոն առած է այժմ: Երկրաբանությունը և Կենսաբանությունը (Biology) և Նուագիտությունը հազարամյակներու հաւաքը սպաննած էին նախորդ դարերու մէջ, այժմ կուգան պաշտպանելու այդ նոյն հաւաքը: Ս. Գրոց քննադատութիւնը (Biblical criticism) որմէ կը զարհուրէին երկնոյր հոգիներ հագիլ քանի մը քրիստոնէական քարտիներ առաջ, համեմատական կրօնագիտութեան ու բանասիրութեան աջակցութեամբ նոր լոյս և արժէք քրտած է աստուածաշնչական գիրքերուն:

10. Բաց աստի, Կրօնի և Գիտութեան համագումար, գործօն, հեղինակաւոր մշակները, ճշմարտութեան դաքին յաղթանակը յուսալու, հեղապոկելու արեն, երկու կալուածներու անունով յայտարարուած պարերագմը վերջացուցած են: Այսօր Գիտութեան մարզը և Կրօնի մարզը իրենց ճամբաները կը քալեն զուգահեռաբար, առանց բաղխումի, սիրով, բարձրագոյն հասկացութեան մը բերած թանկարժէք բարեկամութեամբը զօրեպնդուած:

Երկու կողմերու պարագլուխները այսօր համաձայնութեամբ կը հռչակեն թէ «ԼԱԲ ՂԱՍԿՅՈՒԲՄԸ ԾՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԿԸ ԲԵՐԵՆ ԶՄԱՐԴ, ԻՆՉՊԷՍ ԼԱԲ ՂԱՍԿՅՈՒԲՄԸ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ Կ'ԱՌԱՋՆՈՐԴԷ»:

Ասիկա մեր դարուն և անցեալ դարոց փորձառութեանց հանդիսաւոր, գիտակից խոստովանութիւնն է, որ ինքնին միախառնական է Նայ Եկեղեցոյ crisis-ի քրեսակէրէն:

Համագումարու ենթ վերջապէս թէ Նայոց Եկեղեցոյն դէմ եղած յարձակումները երեւութային (phenomenal) քրկարութեան արդիւնք են, ՊԱՏԱՆԱՐԻ մը հեղեւանք են. անոնք Եկեղեցիի Ոգիի սպառումէն աւելի, *անոր պաշտօնէութեան հոգեկան սնանկութիւնը կ'ախարորոշեն*: Վասն զի առանց անկարելիութեան հանդէպ գրնուելու, Նայ Եկեղեցոյ պաշտօնեան *պայքարը կ'ուրանայ, պարտականութիւնը կ'լքէ*:

Գերմանիայի մէջ, Ենայի համալսարանին պարմագէտ ուսուցչապէրը՝ հանգուցեալ Նայնրիխ Գեյցեր՝ 1890 Մայիս 25ին անձնական նամակի մը մէջ Նայոց Եկեղեցոյն նկարմամբ խօսելով, սապէս կ'ըսէր.

«Նարկ չկայ երկարօրէն մանրամասնել թէ ինչպիսի սոսկալի նեղութիւններ կրելու սքիպուեցան Նայերը՝ Սասանեան Պարսիկներէն, արաբական Խալիֆաներէն, Թիւրքերէն և Նոր-Պարսիկներէն: Սակայն աղերներու բոլոր դարերուն Նայ Ազգը պահպանեց իր թանկագին գոհարը, իր քրիստոնէական հաւաքը, և ջանք չի շարժուեցաւ: Այս պարճառաւ իսկ Աստուծոյ օրհնութիւնը որոշապէս կ'իջնայ Նայոց առաքանհանճար ազգին վրայ և ևս հասարար *համոզուած եմ որ սպազայ դարերու մէջ Նայ Ազգը քրակային մեծամեծ իրաց համար սահմանուած է*:

Բայց իր ԱՊԱԳԱՅ ՏԻԵԶԵՐԱՊԱՏՄԱԿԱՆ (Welthistorische) ԴԵՐԻՆ ՈՒ ԿՈԶՄԱՆԸ ԱՐԻՎԱԲԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹԵԼՈՒ համար Ազգը պէրք ունի հաւաքաքիմ ու նախանձայոյժ վարդապետներու, լորջ հոգեւորական քարոզիչներու և սուրբ օծեալ քահանաներու... Այսօր ցաւալի է որ ժողովուրդը խրտած է խոր կերպով արքաքին ծիսապաշտութեան մէջ... Անհաւարութիւնը, որ կիսկարար և անհիմն իրացումով արեւմտեան լուսաւորութեան ինքզինք թերեւապէս միայն զողած է, յաջողութիւն գրած է նաև

Նայի զարգացեալ գաւակաց մէջ... Ուստի վեհագոյն խնդիր մը կը մնայ այդ ժողովուրդի ուսուցչին, *սէյրք է Նայերը վերստին երկխոյսած եւ քաջ ժողովուրդը դարձնել...* փառաւոր կոչումն հոգեւորականի, որ ՊԷՏՔ Է ԳՈՐԾԷ իր ազգը Աստուծոյ սեփականութեան ժողովուրդը դարձնելու:

Մեր ժամանակները արեւմտեան ազգերու մէջ շահագրգռութիւն մը արթնցած է արեւելեան ազգերու նկատմամբ. անոնք (Անգլիա, Ամերիկա, Գաղղիա, Գերմանիա) բազմաթիւ քարոզիչներ կը դրկեն, որոնք Նայոց մէջ գործել կ'ուզեն: Ճշմարիտ ճանապարհ չէ՛ ասիկա. անոնք կ'ուզեն իրենց անգլիկան, իրենց նորոգող կամ Լութերական Եկեղեցին Նայոց շարքին հնագոյն Եկեղեցիին պարտաստել: Իմաստութիւնը գինքը պարծել պիտի պայ իր գաւակաց: ԱՏԻԿԱ ՉԷ՝ ՃՇՄԱՐԻՏ ՈՒՂԻՆ, ՈՐՈՎ ՆԱՅԱՍԿԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲԱՅՈՒԻ, ԱՅԴ ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ՆԵՐՄԷՆ ԿԱՏԱՐՈՒԻ... Ես համոզուած եմ որ Նայաստանը լուսաւորեալ տեղացի քահանաներու միջոցաւ նոր վերածնութեան կը հասնի»:

Ինչ կը նշանակեն այս տողերը մեր Եկեղեցին խորապէս ճանցող օրար գիտնականէ մը գրուած, եթէ ոչ կոչ մը հայ հոգեւորականութեան՝ իր պարմական փառաւոր դերին, իր կոչման իսկական գործին դառնալու: Ո՛վ կրնայ ուրանալ թէ այսօր հայ կղերը Աւերարանը ձգած է եւ ուրիշ բաներով կ'զբաղի. թէ Աւերարանը, Ս. Գիրքը ոչ միայն երբեմնի սիրուած, վերծանուած գիրքը չէ հայ ժողովուրդին եւ օրար է անոր իր գրաբար լեզուովը, այլ նաեւ ցաւալի է ըսել եօթնապարիկ կնքուած գիրքն է նաեւ հոգեւորականութեան մեծամասնութեան՝ իր պարունակած բարոյական, հոգեւոր գանձերով: Քահանայն գրկած է Մաշտոցը միայն, վարդապետներ ու եպիսկոպոսներ կ'ուսումնասիրեն ու կը բռնեն Ազգ. Սահմանադրութիւնը եւ անկէ բղիտած հրահանգները, ժողովուրդը չի հասկնար Ս. Գիրքը, Յիսուսին կամ Նայաստանեայց Եկեղեցոյ հիմնադրի առաքելաւորո՞ւն պէտք է սպասենք ուրեմն որ կրկին գան Նայաստան Գիրքին կնիքները բանալու համար: Ս. Սահակի, Ս. Մեսրոպի եւ երանաշնորհ Թարգմանեաց ոգոյն դառնալու չէ՞նք ըլլար, երբ աշխարհի ամէն ծայրերէն Նայ Եկեղեցիի բարեկարգութիւնը կը պահանջուի, եւ մենք ԱԿԱՆՋՆԻՍ ԿԸ ՓԱԿԵՆՔ ԱՄԷՆ ՁԱՅՆԻ, պահանջը ուրանալով:

Ու մենք փակալին կը համարձակի՞նք ինքզինքնիս Նայ Եկեղեցոյ պաշտօնեաներ անուանել, երբ ժողովուրդը Եկեղեցիէն ուժացնելէ եւ հեռացնելէ, զայն կրօնական փոփոխութեան խորը թաղելէ վերջ, անոր գաւակները, հայ մանկութիւնը եւ պարանեկութիւնը, մեր անտարբերութեամբ թող կուտանք որ այսօր գիտութեամբ կրօնամերձ հոսանքներու դրօշակին ներքեւ, ուրկէ գանոնք ազատել գրեթէ *անկարելի պիտի դառնայ ընդհուպ*:

Նայի՛նք անգամ մը ու խորիմբ լրջօրէն ազգային վարժարաններու մէջ կրօնի դասերուն պարզած խայտառակ կացութեանը վրայ: Չի զարեւոյնք ճշմարտութենէն ու խոստովանիմք թէ հայ մանուկը չէ՛ յանցաւորը կամ պարասխանաբան, երբ ներկայ մեթոքներով, ներկայ դասագիրքերով ու ներկայ ողորմելի, պարանախան կրօնագիտութեան վարժապետներով մանուկը կը ծաղրէ կրօնը, կը հեզնէ վարժապետը եւ կը մոռնայ գԱստուած, գոր արդէն իսկ փանը մէջ ալ չէր սովորած ընտանեկան կրօնական դաստիարակութիւնով:

Այս ու նման բիրատու իրողությանց հանդեպ բնառ դժուար պիտի չըլլար երեւան բերել կրօնական ապաստումի մը (religious degeneration) կապարեալ եղելութիւնը՝ անհերքելի փաստերով. որոնք մեծ մասով կուգան կը կապուին Նայոց պարպագանց հոգևորականութեան հետ՝ իբրեւ ամբողջութիւն առնուելով: Չենք ուրանար մասնաւոր հասարակութեանց (օր. Էջմիածնայ Ճեմարանին, Արմաշի եւ երբեմն Երուսաղէմի Դպրեվանքներուն) եւ յարգելի անհարակաճութեանց դերը. բայց քակաւին անոնք բաւական չեն մեզ մոռցնելու *կրօնական ապաստումին համաճարակ ախտանշանները* (symptom) կղերական դատուն մէջ. յիշեալ բացառութիւնները ո՛չ ալ այնչափ ներայժ, որչափ մեր պայմանները կը պահանջէին որ ըլլային:

Նայ Եկեղեցոյ վերանորոգութեան հարցը միակ տրամաբանական պատասխանն է օրէ օր աւելի ու աւելի զօրացող պայքարին:

Եկեղեցիին վերանորոգութեան հիմնական ու առաջին քայլը սակայն ո՛չ խաչի, մոմի, պարկերի, զգեստի եւ այլն. խնդիրներէն կ'սկսի, ո՛չ ժամակարգութենէն, ո՛չ Շարականոցէն ու Մաշթոցէն, ո՛չ ալ այս կամ այն օրէնքէն՝ մեր Եկեղեցիին: Ասոնք ամէնքը՝ վերջի խնդիրներ են համեմատաբար եւ ինքնին շար դիւրաւ կը լուծուին երբ առաջին անհրաժեշտը կապարտի, այն է.

Անպարսկի ճշմարտութիւններովը ներշնչել մեր ժողովուրդին ամէն դասակարգերուն:

Այսինքն նախ *Անպարսկը հասնել իր եկեղեցւորած մեղեկութենէն*, հասկնալ զայն իրապէս, գնահատել խորապէս անոր մարտը, յաւիքնապէս գեղեցիկ ոգին ու ամէնէն առաջ մենք՝ հոգևորականներս ներշնչուիլ անով: Եւ յետոյ՝ *մարտցանել ինսամով* ԱՄԷՆ ՍԵՌԻ ԵՒ ՏԱՐԻՔԻ՝ իբր կեանքի գործօն ոյժի աղբիւր:

Անպարսկի Ոգիին վրայ հիմնուած Նայոց Եկեղեցիին վերանորոգութիւնը՝ միայն եւ միայն Անպարսկէն կրնայ գալ: *Թարգմանէնք զայն աշխարհաբարի* ու ԾԱԲԱԼԵՆՔ ԺՈՂՈՎՈՒԲՐԴԻՆ ՄԷՋ: ՄԵԿՆԵՆՔ մանկավարժական եւ աստուածաբանական մեթոքներու նորագոյն եղանակաւ, ու ՆԱՅ ՄԱՆՈՒԿԻՆ քանք անոր կաթը, պապանի եւ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՄ՝ անոր պարունակած ճշմարտութեանց իրական բանաստեղծութիւնը, ՆԱՅ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻՆ՝ անոր պարունակութեան քննադատական գեղեցկութիւնը՝ իբրեւ սնունդ, իսկ արական սեռին ՆԱՍՈՒՆ ՆԱՅՈՒԹԵԱՆ՝ իբրեւ իր սիրտը հասարակող Կենաց Նայ:

Կենդանացնող գիրը եւ կենդանի բարբառը - *Գիրքն ու Բեմը* - այս քննակ վերանորոգեան միջոցները պէտք է ըլլան մեզ: Թող մեր մտաւոր յառաջադիմութիւնները ազապ խօսքի եւ ազապ մամլոյ տրամադրած ամէն հնարաւոր միջոցներով հետամտին Եկեղեցիի վերանորոգութեան բարձր գործին. թող եպիսկոպոս, վարդապետ ու քահանայ՝ հոգևորականութեան այս իսկական կոչումին նուիրումին լաւագոյն անձնուիրութեամբ. իբրեւ կղեր՝ մեր դերին դառնանք ու մեր ամբողջ եռանդը ի սպաս դնենք անոր: Թող հայ քրիստոնէական գրականութիւնը մշակուի մեր մէջ ամէն ճիւղերով. թող գիտնական ըլլան անոր մեթոքները եւ նոյն արեւն ժողովրդական ըլլայ այն - առանց ռամկանալու - թող ամէն ձեւ զգննու թիրիմացութեանց դէմ արժանաւորապէս մարտնչելու համար:

Պայքարին մեջ՝ թող չի փանք որ գիպությունը մենաշնորհը նկատուի՝ յարձակողական դիրք բռնողներուն. գիպությունը մերն ալ է:

Չեմ կրնար այս առիթով ինքզինքս արգիլել յառաջ բերելէ Ալեսի երեց Դեկտեղի հեղինակ քանի մը փողերը, զորս նա ի Werac գումարուած ազգային կրօնական համախօսական ժողովի մը մէջ մաքուր յուզմամբ ու կարարեալ համոզման փառ շունչով մը կարդացած է:

«... Հարկ չի կայ -Քրիստոնէութիւնը պաշտպանելու, վասն զի երբ -Քրիստոնէութիւնը իսկապէս հասկցուի, այլ եւս պէտք չունի պաշտպանութեան. պէտք է գայն ճանչցնել մեր դարուն. պէտք է գայն ներկայացնել ոչ թէ իբր թշնամի մը որ կ'անիծէ ու կը հակառակի, այլ իբր բարեկամ մը, ուր կուգայ դարը վեր առնելու եւ փրկելու: Անշուշտ րեղի չի կայ երկնհելու, երբ պէտք կայ շեշտելու քրիստոնէական ճշմարտութիւնը ու գայն ներկայացնելու իր ամենէն աւոր անկիւններովը. սակայն պէտք է վերջացնել բանադրանքն ու նզովքները: Ամէն բանէ առաջ Սիրոյ եւ Համակրութեան խօսքն է զոր պիտի բերենք մեր դարուն: Պօղոս Առաքելին պէս պէտք է ընել. նա չի շանթահարեց Աթենացոց կռապաշտութիւնը, այլ անոր մէջ հիմ մը գրաւ, յենարան մը -Քրիստոսի Անկարարանին: Մեր Ժողովուրդը թէն քրիստոնէայ՝ բայց չգիտեր թէ ինչ է -Քրիստոնէութիւնը. ոչ միայն մեր ժողովուրդին մտաւորապէս յեղինակալ դասակարգին մէջ, այլ նոյն իսկ զարգացած, ուսնալ, գրագէտ կոչուածներն ալ չեն գիտեր, եւ երբ անոր դէմ կը յարձակին՝ անծանօթի մը դէմ կը յարձակին: Մեր դարը ազատականութեան դարն է, ցոյց փանք իրեն ուրեմն թէ Անկարարան ալ ազատական է: Մեր դարը կը սիրէ՝ գիպությունը եւ բանավարակա՛ն հաւաքը մը կ'ուզէ, ցոյց փանք իրեն թէ հաւաքը գերազանցապէս բանավարական է, եւ թէ գիպութեան բոլոր աշխարհակալութիւններէն շահ կամ օգուտ միայն ունի: Մարդկային գործառնութեան ամէն ճիւղերուն մէջ մեր դարը յառաջադիմութեա՛ն կը ձգարի, ցոյց փանք իրեն թէ ամէն ճշմարիտ յառաջադիմութիւն սկզբամբ կը պարունակուի Անկարարանին մէջ»:

Չի յուսահարինք յարձակումներէն, չորանանք պայքարը, ջրդեղենք մեր կամքը, կարարենք մեր կոչումին պարտականութիւնը Հայոց սիրեցեալ Եկեղեցիին վերածնունդէն ճամբուն վրայ. եւ կարարելապէս վստահ կրնանք ըլլալ ապագային համար:

ՇԱՏԷ Ծ. ՎՐԴ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

23 Փետրուար 1914

Եպիսկոպ. Աստուածաբ. Վարժարան

Քէմպրիճ-Ամերիկա